ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ- 30 - 2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» հունվարի 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Ա. Հովհաննիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1075. Մշակութային ժառանգության ծրագիր» ծրագրի «11004. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կատարել սույն պայմանագրի 2.4-րդ կետով և իր կանոնադրությամբ նախատեսված թանգարանային առարկաների ու հավաքածուների պահպանում, համալրում, հաշվառում, հանրահռչակում, այցելուի սպասարկում և այլ գործառույթներ (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ Հավելված N 1,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով

թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.4-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.5-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնելու հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնելու ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարումը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.8. սույն պայմանագրի 2.4-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման՝ դրա համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե իրականացված միջոցառումների ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ապահովել կազմակերպության գործունեությունը կազմակերպության կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները և իրականացնել դրանց հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.5. ապահովել իր կայուն գործունեությունը, ֆոնդարաններում թանգարանային առարկաների անվտանգ պահպանությունը, ազդանշանային և հակահրդեհային համակարգի շահագործումը:

Գիտաֆոնդային աշխատանքներ

2.4.6. իրականացնել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդերի հաշվառման և պահպանման բաժնի և ՊՈԱԿ-ի ենթակայությամբ գտնվող արգելոց-թանգարանների թանգարանային առարկաների լուսանկարում, ինչպես նաև լուսանկարների, սևանկարների և փաստաթղթերի պատկերահանում (սկանավորում),

2.4.7. շարունակել հույժ կարևոր հուշարձանների փաստավավերագրական նյութերի ապահովագրական պատճենների կազմումը,

2.4.8. շարունակել ՊՈԱԿ-ի գլխավոր մատյանների էլեկտրոնային տարբերակների ստեղծման աշխատանքները,

2.4.9. իրականացնել ՊՈԱԿ-ի հավաքածուների համալրման աշխատանքները,

2.4.10. իրականացնել թանգարանային առարկաների հաշվառման աշխատանքները,

2.4.11. իրականացնել թանգարանային առարկաների գրանցման աշխատանքները՝ գլխավոր բաժինների մատյաններում,

2.4.12. իրականացնել ՊՈԱԿ-ի ֆոնդերում հաշվառված և պահպանվող թանգարանային առարկաների սպասարկում՝ գիտական ուսումնասիրությունների, ցուցահանդեսների, ինչպես նաև բուկլետների, կատալոգների տպագրության համար,

2.4.13. իրականացնել ՊՈԱԿ-ի ֆոնդերում հաշվառված և պահպանվող նյութերի վերանայման և ճշգրտման, տեղադրական ցուցակների կազմման և պահպանվող նյութերի վերահաշվառման (ստուգման) աշխատանքներ,

2.4.14. իրականացնել թանգարանային առարկաների տվյալների մուտքագրումը «Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան» (10000 թանգարանային առարկա),

2.4.15. հաստատել գիտական խորհրդում 2024 թվականի գիտական ծրագրերը, քննարկել և հաստատել գիտամեթոդական խորհրդում և մինչև 2023 թ. ապրիլի 30-ը ներկայացնել պատվիրատուին՝ ներառելով նախատեսվող գիտաժողովների, միջոցառումների, ցուցահանդեսների, հրատարակվող ուսումնասիրությունների և գիտակրթական ծրագրերի ցանկը ու հստակ ժամանակացույցը:

Գիտահետազոտական աշխատանքներ

2.4.16. պեղման աշխատանքների նախապատրաստում և իրականացում ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մռթբի ձոր» և ՀՀ Արմավիրի մարզի «Մեծամոր» հնավայրերում,

2.4.17. «Պատմամշակութային ժառանգություն IV», «Պատմամշակութային ժառանգություն V» և «Մեծամորյան ընթերցումներ II» ժողովածուների հրատարակչական աշխատանքների կազմակերպում,

2.4.18. տպագրել Գուրոսի սևանկարների հավաքածուի կատալոգը և կազմակերպել ցուցահանդես,

2.4.19. նախապատրաստել հրատարակության «Լուսանկարը Ավանի միջնադարյան հուշարձանների պատմության սկզբնաղբյուր» ալբոմ՝ «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդային առարկաների հիման վրա,

2.4.20. նախապատրաստել հրատարակության «Գոշավանքը վավերագրական լուսանկարներում» պատմամշակութային արգելոցի վերաբերյալ գրքույկ՝ «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդային առարկաների հիման վրա,

2.4.21. նախապատրաստել հրատարակության «Խորհրդային ժառանգություն. կանգառներ» պատկերագիրքը և կազմակերպել ցուցահանդես,

2.4.22. նախապատրաստել հրատարակության «Դաշտադեմ» պատմաճարտարապետական արգելոցի վերաբերյալ գրքույկ,

2.4.23. նախապատրաստել հրատարակության «Բերդ» պատմամշակութային արգելոցի վերաբերյալ գրքույկ,

2.4.24. կազմակերպել և մասնակցել հանրապետական և միջազգային գիտաժողովների, սեմինարների, վերապատրաստման ծրագրերի, հրատարակել գիտական, մեթոդական հոդվածներ,

2.4.25. կազմակերպել «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» խորագրով միջազգային գիտաժողով,

2.4.26. իրականացնել վերապատրաստման դասընթացներ ՊՈԱԿ-ի կառուցվածքային ստորաբաժանումների և մասնաճյուղերի աշխատակիցների համար,

2.4.27. իրականացնել զբոսաշրջության առաջնահերթ գոտի հանդիսացող հուշարձանների տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրման աշխատանքներ,

2.4.28. իրականացնել 100 ամրոցների տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրման աշխատանքներ,

2.4.29. իրականացնել ՊՈԱԿ-ում պահվող հնագիտական, ազգագրական և պատմաճարտարապետական հուշարձանների փաստավավերագրական նյութերի վկայագրերի կազմման աշխատանքներ,

2.4.30. իրականացնել «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի պատմաճարտարապետական բեկորների վկայագրերի կազմման աշխատանքներ,

2.4.31. շարունակել ՊՈԱԿ-ի աղբյուրագիտական քարտարանի թվայնացման աշխատանքները,

2.4.32. իրականացնել գիտական գրադարանի համալրմանը և հնատիպ գրքերի վերականգնում,

2.4.33. «Բերդ» պատմամշակութային արգելոցի նոր թանգարանային ցուցադրության հայեցակարգի մշակում:

Պատմամշակութային հուշարձանների և թանգարանային առարկաների հանրահռչակում

2.4.34. իրականացնել գովազդային արշավներ ՊՈԱԿ-ի և վերջինիս պահպանության տակ գտնվող պատմամշակութային արգելոցների, արգելոց-թանգարանների և հուշարձանների հանրահռչակման և զբոսաշրջային գրավչության բարձրացման համար,

2.4.34.1. իրականացնել պատմամշակությաին հուշարձանների արտաքին գովազդ,

2.4.34.2. պատրաստել ֆիլմաշար պատմամշակութային արգելոցների, արգելոց-թանգարանների մասին,

2.4.35. իրականացնել սոցիալական հարթակներում (facebook, Instagram, YouTube և այլն) ՊՈԱԿ-ի, արգելոցների և արգելոց-թանգարանների էջերի զարգացում, տարածում և առաջխաղացում,

2.4.36. իրականացնել ՊՈԱԿ-ի նոր կայքում ինֆորմացիայի լրացում՝ հին կայքից ամբողջ ինֆորմացիայի տեղափոխում նոր կայք և նոր ինֆորմացիայով համալրում: Կայքում ներդնել տոմսերի, գրքերի և հուշանվերների առցանց վաճառքի հնարավորություն,

2.4.37. կայքում հուշարձաններ, արգելոցներ և արգելոց-թանգարաններ վիրտուալ տուրեր ներդնելու համար կատարել համապատասխան աշխատանքեր, համագործակցություն հաստատել հնարավոր գործընկերների հետ,

2.4.38. իրականացնել պատմամշակութային արգելոցների, արգելոց-թանգարանների և հուշարձանների խորհրդանիշերով նվերների, հուշանվերների նախագծում, պատվիրում և

դրանց վաճառքի կազմակերպում արգելոցների, արգելոց-թանգարանների տարածքում, ինչպես նաև օնլայն հարթակներում,

2.4.39. իրականացնել ՊՈԱԿ-ի պահպանության տակ գտնվող բերդերում և ամրոցներում համապատասխան իշխանական տների խորհրդանիշերի (դրոշներ, զինանշաններ և այլն) նախագծում, պատվիրում և տեղադրում,

2.4.40. իրականացնել, ինչպես նաև համակարգել յուրաքանչյուր արգելոցի և արգելոց-թանգարանի տարածքներում տարեկան առնվազն 5 կրթական և սոցիալական ծրագիր դպրոցականների, ուսանողների և հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար,

2.4.41. մշակել և իրականացնել ՊՈԱԿ-ի մասնաճյուղ արգելոցների և արգելոց-թանգարանների զարգացման ծրագրեր,

2.4.42. հաստատել և/կամ ամրապնդել համագործակցություն ներքին և ներգնա տուրիզմով զբաղվող առաջատար տուրիստական ընկերությունների հետ,

2.4.43. ամրապնդել միջազգային գործընկերների հետ համագործակցությունը,

2.4.43.1. իրականացնել հայ-իրանական մշակութային բարեկամություն խորագրով ցուցադրություն Իրանում և Հայաստանում:

Գիտացուցադրական աշխատանքներ

2.4.44. «Թանգարանների միջազգային օր», «թանգարանների գիշեր», «հուշարձանների և պատմական վայրերի միջազգային օր», «ֆրանկոֆոնիայի օրեր» «Եվրոպական ժառանգության օրեր», «եվրոպական հնագիտական օրեր», «Գիտության օր» միջոցառումների խորագրերին համապատասխան՝ մշակել և իրականացնել ծրագրեր,

2.4.45. մշակել և իրականացնել ՀՀ պետական տոներին, հիշատակի օրերին և ժողովրդական տոներին նվիրված միջոցառումներ և ծրագրեր,

2.4.46. ՀՀ մարզերում կազմակերպել Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը հանրահռչակող շրջիկ ցուցահանդես,

2.4.47. նախապատրաստել «Դաշտադեմ», «Դվին» պատմամշակութային արգելոցներում տոմսային տնտեսության ներդրման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ,

2.4.48. կազմակերպել փառատոն «Ամբերդ ամրոց» արգելոցում (խորագիրը՝ «Ամբերդի ծաղրածուն»),

2.4.49. «Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարանում իրականացնել ցուցադրության պայմանների բարելավում, ցուցադրության համալրում,

2.4.50. «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց–թանգարանում կատարել ցուցադրության համալրման (գծագրեր, լուսանկարներ, հատակագծեր, պլաններ, տեքստեր) աշխատանքներ,

2.4.51. «Արփի» բնապատմական արգելոցում իրականացնել հուշարձանների և բնապատմական միջավայրի բարեկարգում, զբոսաշրջային երթուղիների մշակում և դիտահարթակների կազմակերպում, տեղեկատվական և ուղղորդող ցուցանակների տեղադրում,

2.4.52. «Բջնի ամրոց» պատմամշակութային արգելոցում իրականացնել զբոսաշրջային երթուղու մշակում և կազմակերպում, հուշարձանի (ամբար, պալատական շինություն) թանգարանացում և մինչև մայիսի 30-ը Պատվիրատուին ներկայացնել տեղեկատվություն,

2.4.53. «Բերդ» պատմամշակութային արգելոցում իրականացնել թանգարանային ցուցադրության և ֆոնդերի պայմանների բարելավում, ցուցադրության համալրում,

2.4.54. ՊՈԱԿ-ի մասնաճյուղ արգելոցներում, արգելոց-թանգարաններում կազմակերպել գիտակրթական թանգարանային ծրագրեր,

2.4.55. ՊՈԱԿ-ի հիմնադրման հոբելյանական միջոցառումների շրջանակներում կազմակերպել ցուցահանդես:

Հուշարձանների և թանգարանային առարկաների պահպանություն

2.4.56. կազմել պետական սեփականություն հանդիսացող և չօգտագործվող հուշարձանների, դրանց պահպանական գոտիների տարածքում չհամաձայնեցված աշխատանքներին, իրավախախտումներին ընթացք տալու նպատակով իավապահ մարմիններին ուղղված գրություններ, արձանագրություններ,

2.4.57. իրականացնել պահպանվածության առումով առավել վտանգված անշարժ հուշարձանների մշտադիտարկում,

2.4.58. իրականացնել պատմամշակութային հուշարձանների լուսանկարումը և թվայնացումը,

2.4.59. շարունակել համագործակցությունը մարզերի ՏԻՄ մարմինների հետ, նրանց իրազեկել ոլորտում գործող օրենսդրությանը,

2.4.60. իրականացնել «Խաչքարերին նոր կյանք» ծրագիրը,

2.4.61. իրականացնել պատմամշակութային անշարժ հուշարձանների տեղեկատվական շտեմարանի ստեղծման նախապատրաստական աշխատանքներ,

2.4.62. իրականացնել ՊՈԱԿ-ի ֆոնդերում պահվող թանգարանային առարկաների մաքրման, ամրակայման, վերականգնման աշխատանքներ,

2.4.63. իրականացնել ՊՈԱԿ-ի, «Զվարթնոց» և «Մեծամոր» արգելոց-թանգարանների ֆոնդերում պահվող թանգարանային առարկաների, ինչպես նաև հրատարակվող և սպասարկվող նյութերի լուսանկարման և սքանավորման աշխատանքներ,

2.4.64. իրականացնել ՊՈԱԿ-ի «Գործվածքի» և «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանում պահվող գորգերի ֆոնդում հատուկ նյութով մշակման (միջատների (ցեց) դեմ) աշխատանքներ,

2.4.65. իրականացնել մոնիթորինգ ՊՈԱԿ-ի ֆոնդասենյակներում և արգելոց-թանգարաններում պահվող թանգարանային առարկաների վիճակի, պահպանման պայմանների ստուգման և փաստագրման համար,

2.4.66. 2017 թ.-ից «Մեծամոր» հնավայրում հայ-լեհական համատեղ արշավախմբի կողմից իրականացվող պեղումների ընթացքում հայտնաբերված հնագիտական նյութերի մաքրում, վերականգնում, չափագրում և նախապատրաստում թանգարան հանձնմանը,

2.4.67. սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման դեպքում հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում պետական մարմնի պահանջով տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպությունների կամ մեկենասի ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.68. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.69. ապահովել կազմակերպության հրապարակային հարթակների (պաշտոնական կայքէջ, Facebook, Instagram և այլն) գործարկումը կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.70. իրականացնել անհրաժեշտ գովազդատեղեկատվական միջոցառումներ մշակութային արդյունքը հանրության լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով: Եռամսյակային հաշվետվությամբ պետական մարմնին ներկայացնել հրապարակային հարթակների (պաշտոնական կայքէջ, Facebook, Instagram, Youtube և այլն) հետևորդների քանակը, ինչպես նաև յուրաքանչյուր միջոցառման գովազդային նյութերի շահառուների ցուցանիշները (*like, share*),

2.4.71. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.72. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.73. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.74. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունները: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար: Բովանդակային հաշվետվության հետ ներկայացնել իրականացված միջոցառումների մասին համապատասխան նյութեր (լուսանկարներ, լոգոտիպ կամ այլ գրաֆիկական պատկեր կամ ազդագրեր), հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.75. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն << ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև << օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.76. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.77. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.78. ավարտված միջոցառումների փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար,

2.4.79. սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պետական մարմնի հաստատմանը ներկայացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես, մինչև փաստացի ծախսերի կատարումը, համաձայնեցնել պետական մարմնի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2023 թվականի դեկտեմբերի 15-ը,

2.4.80. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 22-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար հաստատվում է **441219,6 հազար (չորս հարյուր քառասունմեկ միլիոն երկու հարյուր տասնինը հազար վեց հարյուր) դրամ**՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 1-ի: Պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է **378921,2 հազար (երեք հարյուր յոթանասունութ միլիոն ինը հարյուր քսանմեկ հազար երկու հարյուր)** դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1887-Ն որոշմամբ հատկացված հարկային պարտավորությունների մարման համար գումարի տրամադրումը: Պայմանագրով հատկացված գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում սույն պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված ժամկետներում, կազմակերպության՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված և կատարված միջոցառումների մասով կազմակերպությունը, ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը,

պետական մարմնին է ներկայացնում ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն Հավելված N 3-ի:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.6. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.7. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.8. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմի:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է սույն պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032399 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտավորությունները կատարող՝
_____ **Վ. Գասպարյան**
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Թաիրովի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001843, ՀՎՀՀ 02511401
հեռ. (010) 587-427
տնօրենի Ժ/պ՝
_____ **Ա. Հովհաննիսյան**

Հավելված N 1
«27» «01» 2023 թ.
N ՄՇԴ-30 -2023 պայմանագրի

2023 թվականին **«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն»** ՊՈԱԿ-ի կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

	Ցուցանիշներ	Քանակ
Քանակական	Պահպանվող թանգարանային առարկաներ	320697
	Սպասարկվող թանգարանային այցելուներ, այդ թվում՝	770698
	իգական սեռի	*385349*
	արական սեռի	*385349*
	Թանգարանային առարկաների համալրում	2059
	Թանգարանային առարկաների վերականգնում	33
	Կազմակերպվող ցուցահանդեսներ	20
	Եկամուտներ (հազար դրամ), այդ թվում՝	944029,6
	տրամադրվող դրամաշնորհի գումարը (հազար դրամ)	**441219,6 ***
	հասույթ տոմսերի վաճառքից (հազար դրամ)	492310,0
	այլ եկամուտ (հազար դրամ)	10500,0
	Ծախսեր (հազար դրամ)	944029,6

* Գումարը նվազեցվում է հաշվի առնելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1887-Ն որոշմամբ հատկացված հարկային պարտավորությունների մարման համար գումարի տրամադրումը (441219,6 - 62298,4 = 378921,2 հազար դրամ):

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032399 ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի պարտավորությունները կատարող՝
_____ **Վ. Գասպարյան**

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Թաիրովի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001843, ՀՎՀՀ 02511401
հեռ. (010) 587-427
տնօրենի Ժ/պ՝
_____ **Ա. Հովհաննիսյան**

Կ. Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
«27» «01» 2023 թ. N ՄՇԴ-30-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1075	Միջոցառում 11004	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների (աճողական)												
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			ԸՆԴԱՄԵՆԸ
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	4637	0.0	37892.1	**75784.2**	107361.0	138937.8	**170514.5**	202091.3	233668.1	**265244.8**	303137.0	341029.1	**378921.2**	**378921.2**
Ընդամենը		0.0	37892.1	75784.2	107361.0	138937.8	170514.5	202091.3	233668.1	265244.8	303137.0	341029.1	378921.2	378921.2

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032399 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վ. Գասպարյան
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Թաիրովի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001843 ՀՎՀՀ 02511401
հեռ. (010) 587-427
տնօրենի պարտականությունները
կատարող՝
Ա. Հովհաննիսյան
Կ.Տ.

Հավելված N 3
« » « » 2023 թ.
N ՄՇԴ- -2023 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքա-կանության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարա-գրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխա-տեսումը հաշվետու ժամանա-կահատվածի համար	Ցուցանիշի փոփո-խություններն ըստ համապա-տասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակա-հատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակա-հատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերու-թյունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբե-րության պարզա-բանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032399 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտավորությունները կատարող՝
Վ. Գասպարյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Թաիրովի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900018001843, ՀՎՀՀ 02511401
հեռ. (010) 587-427
տնօրենի Ժ/պ՝
Ա. Հովհաննիսյան